

ԱՆԻ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ՁԵՎԵՐԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Ա. ԱՐՐԱՀԱՄՅԱՆԻ ԲԱՅԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

(ըստ «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության)

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i64.86

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում անդրադառնում ենք ժամանակակից հայերենի դերբայական ձևերի սեղմ վերլուծությանը՝ ըստ Ա. Ա. Արրահամյանի ընդհանուր տեսության: Առաջին հերթին ներկայացվում է այն, որ Արրահամյանը հայերենում դերբայական ձևերի քննության մեջ նկատվող վիճակի քերականական կարգը տարբերում է ռուսերենի նույն անվանումով կարգից (категория состояния):

Այնուհետև ներկայացված է անվանի լեզվաբանի կատարած խմբավորումը՝ ըստ տվյալ դերբայի վիճակային դրսևորման՝ 1) տարտամ, անորոշ, թույլ դրսևորում ունեցող, 2) ցայտուն, բայց ոչ ժամանակային վիճակ արտահայտող, 3) ժամանակային ընդհանուր վիճակ արտահայտող: Համապատասխանաբար ներկայացված են նաև հիշյալ երևույթը ուսումնասիրած մյուս լեզվաբանների՝ Մ. Արեղյանի, Հ. Աճառյանի, Է. Աղայանի, Գ. Ջահուկյանի և Գ. Սևակի տեսական մոտեցումները:

Արրահամյանն առանձնացնում է նոր տիպի դերբայ՝ ընթացակցական անվանումով, որն իր ձևով և գործառությամբ, ըստ այդ առանձնացման, տարբերվում է մյուս դերբայներից, և ըստ այդմ էլ՝ այն բնորոշում ըստ իր գործառությունների:

Տեսական վերլուծությունները և առանձնացումները հիմնավորվում են բերվող բնագրային օրինակներով՝ առնված ոչ միայն ժամանակակից գրական հայերենից, այլև բարբառներից:

Նշենք նաև, որ ժամանակակից հայերենի դերբայների համակարգում կատարված նման դասակարգումը մեծ մասամբ ընդունված է արդի գրական հայերենին վերաբերող ուսումնասիրություններում:

Բանալի բառեր և արտահայտություններ, ժամանակակից հայոց լեզու, Ա. Աբրահամյանի լեզվաբանական ժառանգությունը, դերբայական ձևեր, ընթացակցական դերբայ, բայի տեսություն, վիճակի կարգ:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից հայերենի բայական համակարգի գիտական վերլուծությունը, որ կատարվում է Ա. Աբրահամյանի աշխատություններում, դասական լեզվաբանական քննության օրինակ է:

Ա. Աբրահամյանը իր «Բայը ժամանակակից հայերենում» աշխատության մեջ անդրադառնում է մի շարք հարցերի, ինչպիսին են՝ բայի խոսքիմասային բնույթը, բառական - քերականական կազմությունը, սեռի քերականական կարգի դրսևորումը և այլն: Աշխատության մեջ առանձին տեղ է զբաղեցնում դերբայական ձևերի քննությանը նվիրված հատվածը: Նկատենք, որ նա մինչ այդ գրել էր դերբայներին նվիրված առանձին ուսումնասիրություն (Աբրահամյան Ա., 1953):

Անվանի լեզվաբանը ներկայացնում է տեսական ընդհանուր դիտարկումներ ժամանակակից հայերենի դերբայական ձևերի մասին, առանձին-առանձին քննում դերբայների տեսակները, անդրադառնում է դերբայական ձևերի մեջ խոսքիմասային փոխանցումներին, իսկ վերջում մեկ տասնյակից ավելի կետերով ամբողջացնում ասվածը:

Ամենից առաջ տալիս է հետևյալ ընդհանուր բնութագիրը. դերբայները «սերտորեն կապված են բայ խոսքի մասի հետ, բխում են նրա էությունից, քերականական կառուցվածքում նրա գոյության ձևերից են» (Աբրահամյան Ա., 1962):

Դերբայական ձևերի «կուտակումը» (իմա՝ դերբայների քանակի ավելացում) ժամանակակից գրական հայերենում հեղինակը բացատրում է բայական համակարգի պատմական զարգացմամբ՝ նշելով, որ բարբառներում այդ ձևերն ավելին են:

Հայտնի է նաև, որ դերբայների հիմնական, առաջին տարբերակիչ կողմը անդամ լինելն է, այսինքն՝ դերբայները չունեն դեմքի, թվի, ժամանակի քերականական կարգեր:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Աբրահամյանի ընդհանուր տեսության մեջ դերբայական ձևերի քննությունը ներկայացնելու համար հետազոտության մեթոդ ընտրվել է **նկարագրական համեմատությունը**:

Համեմատության մեջ են դրվել դերբայական ձևերի քննությանն անդրադարձող հեղինակներից Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի, Է. Աղայանի, Գ. Զահուկյանի, Գ. Սևակի հայացքները:

Այնուհետև **վերլուծական** մեթոդով քննվել են վերոնշյալ հեղինակների տեսակետները դերբայներին վերաբերող որևէ հարցի վերաբերյալ՝ ըստ արդի լեզվաբանության ընդունված նորմերի:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Դերբայական ձևերի քննության մեջ, ըստ Աբրահամյանի, առանձնացվում է վիճակի քերականական ըմբռնումը, որը լեզվաբանի պնդմամբ ամբողջովին չի համընկնում ռուսագիտության մեջ տարածված **վիճակի կարգի** (ռուս. категория состояния) հասկացությանը, այլ պարզապես արտահայտում է գործողության ընթացքի բնույթը:

Այստեղ հարկ ենք համարում բերել Ա. Աբրահամյանի դերբայներին տրված հետևյալ սահմանումը. «Դերբայներ են կոչվում բայի անդամ ձևերը, որոնք բայական մի շարք հատկանիշների հետ գործողությունը կամ եղելությունը դրսևորում են տարբեր վիճակներում»:

Մեծ հայագետը ժամանակակից հայերենի դերբայները խմբավորում է՝ ըստ տվյալ դերբայի վիճակային դրսևորման. այսպես՝ 1) տարտամ, անորոշ, թույլ դրսևորում ունեցող դերբայներն են դիտվում **անորոշ և ժխտական** դերբայները, իսկ 2) ցայտուն, բայց ոչ ժամանակային վիճակ արտահայտում են **անկատար և ենթակայական** դերբայները, 3) ժամանակային ընդհանուր վիճակ արտահայտում են՝ **ապառնի, վաղակատար և հարակատար** դերբայները:

Այնուհետև նկատենք, որ Էդ. Ադայանը դերբայների խմբավորումը կատարելիս հաշվի է առնում նրանց գործառական և իմաստային հատկությունները և ըստ այդմ էլ, վիճակային դերբայներից բացի, առանձնացնում է նաև մի խմբի դերբայներ՝ կերպային անվան տակ: Նա վիճակային է համարում **ենթակայական, հարակատար, ապառնի** դերբայները, իսկ **անկատարը, վաղակատարը, կատարելին և ժխտմանը՝** կերպային (Ադայան Է., 1967):

Ջահուկյանը, անդրադառնալով բայի դիմավոր և անդեմ ձևերի համար ընդհանուր, ինչպես նաև դրանց տարբերիչ իմաստներին, նշում է, որ գոհացուցիչ չէ Ա. Աբրահամյանի այն տեսակետը, թե անդեմ ձևերը դիմավոր ձևերից տարբերվում են վիճակի հասկացության արտահայտման միջոցով: Այդպես նաև նա ընդունելի չի համարում Էդ. Ադայանի կատարած խմբավորումը՝ ըստ կերպային և վիճակային տեսակների. այդ տարբերակումը Ջահուկյանը համարում է արհեստական (Ջահուկյան Գ., 2000):

Նկատենք նաև այն, որ Աճառյանը անորոշը դիտում է իբրև ընդհանուր կամ բացարձակ դերբայ, որի ժամանակը անհայտ է, ծառայում է ընդհանրապես թե՛ ներկա, թե՛ անցյալ և թե՛ ապառնի, ընդ սմին հետևելով հայ քերականագիտության մեջ հունաստիպ քերականությունների ավանդույթին՝ այն անվանում աներևույթ (infinitif) տերմինով:

Աբրահամյանը գրում է. «Անորոշ դերբայը ուրիշ խոսքի մասերի, ինչպես և տարբեր բայերի անորոշ դերբայների հանդեպ առանձին բառական միավոր է, բառույթ է, իսկ նույն բառի մյուս դերբայական ձևերի հանդեպ այդպիսին չէ, այլ՝ նույն բայական բառույթի դերբայական ձևերից մեկը (Աբրահամյան Ա., 1962):

Աբրահամյանը նշում է, որ անորոշ դերբայը կարող է ենթարկվել փոխանվանական հոլովման՝ ստանալով **-ու** մասնիկը (օրինակ՝ **գրել - գրելու**), որը առաջացել է բառավերջի **-ոյ** մասնիկի պատմական հնչյունափոխության արդյունքում:

Միաժամանակ բերվում են անորոշ դերբայի կազմության այսօր խիստ տարբերվող ձևեր՝ գրելով հետևյալը. «Անցյալում արևելահայ գրականության մեջ արտացոլում են գտել նաև անորոշ դերբայի հոլովման այնպիսի ձևեր, որոնք

տարբերվում են նրա հոլովման հիմնական սիստեմից», և բերում է համապատասխան օրինակներ. «Երկնից թռչունք դադարեցեք **երգելից**» (ՌՊ) և այլն: Ընդգծված **երգելից** ձևը այսօր ժամանակակից գրական արևելահայերենին բնորոշ կազմություն չէ (Աբրահամյան Ա., 1962):

Դերբայների ուսումնասիրության մեջ լեզվաբաններն առաջնահերթ են համարում դերբայների խոսքիմասային պատկանելության, արտահայտած նշանակության (իմա՝ ձևաբանական, շարահյուսական), նրանց տրված անվանման համապատասխանության և նմանատիպ մի շարք հարցեր:

Դերբայական ձևերի և նրանց առանձին տեսակների խոսքիմասային պատկանելության հարցը հայ քերականության պատմության մեջ ստացել է տարբեր լուծումներ:

Ջահուկյանը առանձնացնում է հայ լեզվաբանների կողմից դերբայների խոսքիմասային պատկանելության որոշման երեք տեսակ դասակարգում՝ «գուտ» իմաստաբանական-իմացաբանական (Ա. Աբրահամյան, Ա. Ղարիբյան, Գ. Սևակ և ուրիշներ), գործառական (Մ. Աբեղյան և ուրիշներ) և տարասեռ (Մ. Պալասանյան և ուրիշներ): Գ. Ջահուկյանը նկատում է, որ ինչպես Ա. Աբրահամյանը, Ա. Ղարիբյանը, Գ. Սևակը, որ խոսքի մասերի որոշման դեպքում առաջնորդվում են գուտ իմաստաբանական-իմացաբանական հիմունքով, այնինչ բառերի իմաստաբանական-իմացաբանական դասակարգումը չի կարող չունենալ գործառական մոտեցման տարրեր և տալիս է լրացուցիչ բացատրություն, որ այդ մոտեցումները ոչ թե իրար բացառում են, այլ հակառակը՝ իրար լրացնում են (Ջահուկյան Գ., 2000):

Այս համատեքստում Գ. Ջահուկյանը ընդունում է Մ. Աբեղյանի դերբայների խոսքիմասային պատկանելության որոշման ժամանակ գործառական մոտեցման կարևորությունը, բայց և չի ընդունում այդ տարբերակման բացարձականացումը:

Հ. Աճառյանը անորոշ դերբայը իր բոլոր ձևերով համարում է գոյական, որը կարող է հոլովվել եզակի թվով, երբեմն էլ՝ հոգնակի:

Աբրահամյանը չի ընդունում Աճառյանի այն մոտեցումը, թե անորոշ դերբայը կարող է երբեմն գործածվել նաև հոգնակի թվով: Այսպես, Ա. Աբրահամյանը,

ինչպես նաև Գ. Սևակը, այդ **-ներ** վերջավորությունը (հմմտ. **գնալ - գնալներ** և այլն) դիտարկում են որպես ստացականությանը առնչվող մասնիկ, քանի որ հոգնակիության մեջ, ըստ լեզվաբանների պիտի արտացոլվի որևէ առակայի քերականական թվի գաղափարը:

Հ. Աճառյանը «ներկա դերբայի» կազմության ձևերից է համարում սահմանական ներկա և անկատար ժամանակները կազմող **-ում** և **-իս** մասնիկներով ձևերը:

Աբրահամյանը, ինչպես նաև Մ. Աբեղյանը, Է. Աղայանը, Գ. Սևակը անկատարը ներկայացնում են որպես դերբայական առանձին տեսակ:

Մ. Աբեղյանը հատուկ նշում է, որ **-իս** մասնիկով կազմվող անկատար դերբայը մակբայ է: Աբրահամյանը չի համաձայնում գրելով. «Նկատի ունենալով նրա (իմա՝ **-իս** տարբերակի) պարագայական կիրառությունը (փողոցով **անցնելիս** տեսա ընկերոջս) Մ. Աբեղյանը դերբայական այդ ձևը տեղադրում է նաև մակբայների մեջ, հավասարության նշան դնելով նրանց (իմա՝ **-ում** և **-իս** տարբերակների) միջև ըստ կիրառության: Այսպիսի մոտեցումը ընդունելի չէ» (Աբրահամյան Ա., 1962):

Հ. Աճառյանը և Մ. Աբեղյանը մեկ ընդհանուր անցյալ դերբայի կազմում դիտում են վաղակատար (**-ել**) և հարակատար (**-ած**) դերբայները, այնինչ Ա. Աբրահամյանը առանձնացնում է վաղակատար դերբայը որպես ինքնուրույն տեսակ, որն արտահայտում է կատարյալ վիճակի գաղափար:

Նախկինում ընդունված անցյալ դերբայի այս երկու տեսակների միջև կան որոշակի տարբերություններ՝ կապված հետևանքային երանգի առկայության հետ: Այսպես, ըստ Ա. Աբրահամյանի, վաղակատարն արտահայտում է ավարտված գործողության գաղափար՝ առանց **հետևանքային** (իր ձևակերպումով՝ յուրատեսակ) **երանգի**, իսկ հարակատարը, ընդհակառակը՝ արտահայտում է կատարյալ գործողության գաղափար՝ **հետևանքային երանգով** (Աբրահամյան Ա., 1962):

Մյուս տարբերությունն այն է, որ ըստ Ա. Աբրահամյանի՝ հարակատար դերբայն ունի և՛ ձևաբանական, և՛ շարահյուսական, իսկ վաղակատարը՝ միայն

ձևաբանական նշանակություն, իհարկե, բացի շարահյուսական դերով դիմավոր ձևերի կազմում հանդես գալուց:

Անվանի լեզվաբանը կարծում է, որ ենթակայական դերբայը ձևավորման և արտահայտման մեջ հասել է օրենքների լիակատար հստակության և նման նկատառումը գիտական որոշակի ձեռքբերում է:

Նա չի կիսում Ն. Տեր-Ղևոնդյանի այն կարծիքը, թե ենթակայական դերբայի և օժանդակ բայի հարադիր գործածությունից կազմվում են դիմավոր ձևեր և բացատրում, որ նմանատիպ կազմությունները յուրատեսակ ոճային փոխարինիչներ են:

Մ. Աբեղյանը, Ա. Աբրահամյանը, Գ. Սևակը, որպես ենթակայական դերբայի ձևավորման ցուցիչ, ներկայացնում են **-ող** մասնիկը, մինչդեռ Հ. Աճառյանը ենթակայական դերբայը համարում է ներկա դերբայի տեսակներից մեկը և ցույց է տալիս կազմության այլ տարբերակներ (**-ան**, **-ուն** մասնիկներով. օրինակ՝ **ճարտաս-ան** «ճարտար խոսող», **մնայ-ուն** «մնացող»), որոնք հետագա լեզվաբանների կողմից չեն հիշատակվում:

Այնուհետև, կան լեզվաբանների տարբեր կարծիքներ ժխտական դերբայի կազմության վերաբերյալ: Այսպես. Աբրահամյանը նշում է, որ ժխտական դերբայը չունի ձևավորման հատուկ մասնիկներ, այլ որպես մասնիկ են ծառայում **ա** և **ե** լծորդները. **ա** լծորդության դեպքում մասնիկը նույնությամբ պահպանվում է, իսկ **ե** լծորդության դեպքում այն փոխվում է **ի**-ի: Այնինչ Էդ. Աղայանը գրում է. «Այս դերբայը կազմվում է անկատարի բայահիմքին ավելացնելով **ա** վերջավորությունը **ա** խոնարհման բայերի համար և **ի** վերջավորությունը՝ **ե** խոնարհման բայերի համար» (Աղայան Է., 1967):

Աբրահամյանը առաձնացնում է նաև մի նոր դերբայ՝ անվանելով **ընթացակցական** դերբայ, որը, ըստ Աբրահամյանի, «տարածում ունի միջին հայերենում, արևմտահայ գրական լեզվում և մանավանդ շատ բարբառներում»: (Աբրահամյան Ա., 1962):

Աղայանը ընդունում է այս տեսակի առանձնացումը իբրև ինքնուրույն դերբայ, սակայն անվանման ընտրությունը համարում է քերականական իմաստի ծավալի

առումով ոչ ընդգրկուն, քանի որ բացի **-են** վերջավորությունով կազմվածից՝ ներառում է նաև **-իս** վերջավորությամբ կազմվածը (օրինակ՝ **գրելիս**), որն արտահայտում է ժամանակային հարաբերություն, և ըստ այդմ էլ նոր կամ **ընթացակցական** դերբայը նա վերանվանում է **մակբայական**, ըստ ձևի (**-են**) և ժամանակի (**-իս**) իմաստներով:

Ըստ Ջահուկյանի՝ «ոմանք հիշատակում են նաև, այսպես կոչված «ընթացակցական» կամ «ձևի» «դերբայը»՝ **-ելեն** / **-ալեն** ածանցական վերջամասնիկով, սակայն այն հատուկ չէ գրական նորմավորված լեզվին» (Ջահուկյան Գ., 2000):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այս նկատառումով նշենք հետևյալը.

1. Ա. Աբրահամյանը դերբայների քննության պարագայում ներմուծում է վիճակի քերականական հասկացությունը, որը հետագայում զարգացնում է Է. Աղայանը՝ այդ համատեքստում տեսնելով նաև մեկ այլ դրսևորում (իմա՝ կերպային դրսևորում): Եղած արդյունքները ավելի ուշ շրջանում Գ. Ջահուկյանին հնարավորություն են ընձեռում՝ ուսումնասիրելով դերբայների պատմական զարգացումը կատարել որոշակի լուրջ դիտարկումներ:

2. Անվանի լեզվաբանը, ընդլայնելով հետազոտությունների շրջանակները, անդրադառնում է նաև դերբայների և նրա առանձին տեսակների խոսքիմասային պատկանելությանը և ապացուցում, որ թեև անորոշ դերբայը ընդհանուր, բացարձակ դիրք է գրավում հարացույցում, սակայն չի ընդունում, որ ոմանք այն համարում են գոյական:

3. Ա. Աբրահամյանը ցույց է տալիս մեկ դերբայի կազմում մինչ այդ հանդես եկող վաղակատար և հարակատար դերբայների տարբերությունները. ընդունում է, որ երկուսն էլ արտացոլում են անցյալ ժամանակ, բայց որոշակի տարբերությամբ՝ վաղակատարը առանց հետևանքային երանգի է, իսկ հարակատարը հետևանքային երանգով է:

4. Ըստ Աբրահամյանի՝ ժխտական դերբայը չունի ձևավորման մասնիկներ, այլ մի դեպքում վերջավորությունը պահպանվում է (իմա՝ ա-ա), մյուս դեպքում փոխվում (իմա՝ ե-ի):

5. Հետազոտելով հայերենի տարբեր փուլերի և բարբառների առկա տվյալները՝ Աբրահամյանը առաջինն է, որ առանձնացնում է մի նոր դերբայ՝ տալով նրան **ընթացակցական** անվանումը, որ է. Աղայանը կոչում է **մակբայական**՝ ձևի (-ելեն) և ժամանակի (-իս) իմաստներով: Մենք համաձայն ենք Ա. Աբրահամյանի տեսակետին, այսինքն՝ **ընթացակցական** դիտել միայն -ելեն, -ալեն վերջավորությամբ տարբերակը, իսկ -իս տարբերակով դերբայը համարել, ինչպես այժմ է ընդունված, **համակատար դերբայ**:

Իբրև եզրակացություն կարելի է նշել, որ մեծ է վաստակաշատ լեզվաբանի կատարած աշխատանքը դերբայների ուսումնասիրության բնագավառում: Նա այդ աշխատանքն իրականացրել է՝ հիմք ունենալով հայոց լեզվի տարբեր փուլերի և զարգացման վիճակների, նաև բարբառների հսկայական նյութը:

Աբրահամյանի դիտարկումները համոզիչ են, հաստատված համապատասխան օրինակներով, վաստակալի նյութով: Նրա գնահատումները լեզվի որևէ նյութի առումով ներկայացնում են գիտական բարձր որակ և արժեք:

Ա. Աբրահամյանի տեսությունը այսօր ևս արդիական է և շատ դեպքերում կարող է ուղենիշ լինել ժամանակակից հայերենի բայի ներկայիս վիճակի առավել ընդգրկուն ուսումնասիրության համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբրահամյան Ա. (1953)**, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
2. **Աբրահամյան Ա. (1962)**, Բայը ժամանակակից հայերենում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ.:
3. **Աղայան Է. (1967)**, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ.:

4. **Ջահուկյան Գ. (2000)**, Հայոց լեզվի տեսության և պատմության հիմնահարցեր, Անթիլիաս, Համազգայինի Վահե Սեթեան տպարան:

REFERENCES

1. **Abrahamyan A. (1953)**, Hayereni derbaynery' ev nranc d'&abanakan nshanakowt'yowny' /Participial forms of the Armenian language and their morphological meaning/, Yerevan, publish. Academy of Sciences.
2. **Abrahamyan A. (1962)**, Bayy' jhamanakakic hayerenowm /Verb in the modern Armenian language/, Yerevan, publish. Academy of Sciences.
3. **Aghayan E. (1967)**, Declension and conjugation in the modern Armenian language, Yerevan, publish. Academy of Sciences.
4. **Jahukyan G. (2000)**, Hayoc lezvi tesowt'yan ev patmowt'yan himnaharcer /Questions of the theory and history of the Armenian language/, Antilias, Vahe Setian Hamazgayin Tparan.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՌՊ – Ռափայել Պատկանյան

Ани Авагян

Исследование дербайных форм армянского языка

в системе теории глагола А. Абрамяна

(Монография «Глагол в современном армянском языке»)

Заклучение

Ключевые слова и выражения: современный армянского языка, дербайных форм, сопутствующая дербайная форма, теория глагола, категория состояния.

В статье дается краткий анализ дербайных форм современного армянского языка в теории А. А. Абрамяна в его монографии “Глагол в современном армянском языке”. Намы показано, что Абрамян различает категория грамматического

состояния, которая отличается, к примеру, от русского соответствующей категории (категория состояния).

Далее, нами дается следующая смысловая группировка, сделанная маститым лингвистом: 1) краткое, неясное, слабое проявление, 2) экспрессивное, но не выражающее временное состояние, 3) выражающее общее временное состояние, не упуская из вида внимания других исследователей, -М. Абебяна, Х. Ачаряна, Э. Агаяна, Г. Джаукяна и Г. Севака.

А. Абраамяном выделяется новый тип дербайная форма (т. е. *ընթացակցական ժերբայ* [əntˈaksˈakan derbay] “сопутствующая дербайная форма”), уточняются еще некоторые аналогичные формы, в особенности на основе их функции.

Теоретический анализ и различия обоснованы приведенными текстуальными примерами, взятыми не только из современного литературного армянского языка, но и его диалектов.

Следует также отметить, что такая классификация, неоднократно имеют место в исследованиях специалистов современного литературного армянского языка.

Ani Avagyan

**Study of the Participial forms of the Armenian Language
in the system of the theory of the verb A. Abrahamyan
(According to the monograph "The Verb in Modern Armenian")**

Conclusion

Key words and expressions: the modern Armenian, the participial forms, concomitant participial, the theory of the verb, state category.

The article briefly analyzes the participle forms of Modern Armenian in the theory of A. A. Abrahamyan in his monograph "The Verb in Modern Armenian". We show that Abrahamyan distinguishes the category of grammatical state, which differs, for example, from the Russian corresponding category (category of state).

Further, we give the following semantic grouping made by the venerable linguist: 1) brief, vague, weak manifestation, 2) expressive but not expressing a temporal state, 3)

expressing a general temporal state, without omitting the attention of other researchers - M. Abeghyan, H. Acharyan, E. Aghayan, G. Jahukyan and G. Sevak.

A. Abrahamyan singles out a new type of participle form (i.e. *ընթացակցական դերբայ* [əntʰakcʰakan derbay] "accompanying participle form"), clarifies some other similar forms, especially on the basis of their function.

The theoretical analysis and distinctions are substantiated by the textual examples given, taken not only from Modern Literary Armenian, but also from its dialects.

It should also be noted that such classification, repeatedly take place in the researches of specialists of Modern Literary Armenian.

Անի Ավագյան - ՀՊՄՀ աղագ. Ա. Ղարիբյանի անվան հայոց լեզվի և նրա դասականի մեթոդիկայի ամբիոնի դասախոս, հայցորդ: Գիտական հետաքրքրությունները՝ ժամանակակից հայոց լեզու, ժամանակակից հայոց լեզվի ուսուցման մեթոդիկա: avagyanani01@aspu.am

Ани Авагян – Преподаватель кафедры армянского языка и методики его преподавания им. акад. А.С. Гарибяна АГМУ, соискатель кафедры. Научные интересы: современный армянский язык методика преподавания армянского языка. avagyanani01@aspu.am

Ani Avagyan - Specialist of the Department of Armenian language and methods of teaching it. acad. A.S. Garibyan ASMU, candidate of the department. Scientific interests: modern Armenian language, methods of teaching the Armenian language. avagyanani01@aspu.am

Խմբագրություն է ուղարկվել 13.12.2023թ.

Հանձնարարվել է գրախոսության 18.12.2023թ.

Հրապարակման է ներկայացվել 05.06.2024թ.